Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Հասարակագիտություն>> առարկայից (8 դասաժամ), <<Ֆիզկուլտուրա>> առարկայից (23 դասաժամ), <<Տեխնոլոգիա>> առարկայից (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝3x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **դեկտեմբերի 19-ը ներառյալ,** ամեն օր՝ժամը 10^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 22-ին՝ ժամը 14^{00}-ին,** Արարատի մարզի Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝Արարատի մարզ, գյուղ Հովտաշեն, Բարեկամության 23:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 75-11-83: